

<b>Եկամուտների կազմը և ԸՊԵ գործակցին մասնակցելու առավելագույն կշիռները</b>		
<b>1.</b>	<b>Առաջնային եկամուտներ.</b>	
<b>1.1</b>	Վարկառուի/համավարկառուի մասնագիտական հմտությունների և կարողությունների վրա հիմնված հիմնական աշխատաժամանակում ստացվող աշխատավարձը/եկամուտ	100%
<b>1.2</b>	Սեփական ձեռնարկատիրական գործունեության արդյունքում ստացվող համապատասխան փաստաթղթերով հիմնավորված եկամուտը (շահույթը)	
<b>2.</b>	<b>Երկրորդային եկամուտներ</b>	
<b>2.1</b>	<p>Վարկի դիմումի ընդունման օրվան նախորդող առնվազն 12 ամիս առաջ՝ օրենքով սահմանված կարգով կնքված վարձակալության պայմանագիր:</p> <p><b>Քանկի ռեսուրսի շրջանակներում վարկավորման դեպքում՝</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- Վարձակալությունից ստացված եկամուտ, որը ստացվել է վարկի դիմումի ընդունման օրվան նախորդող առնվազն 3 ամիսների ընթացքում և հիմնավորված է օրենքով սահմանված կարգով կնքված վարձակալության պայմանագր(եր)ով:</li> </ul>	100%
<b>2.2</b>	պետական գանձապետական պարտատոմսերում, ՀՀ ԿԲ արժեթղթերում, այլ արժեթղթերում ներդրումներից ստացված եկամուտները՝ վարկի դիմումի ընդունման օրվան նախորդող առնվազն մեկ տարվա ընթացքում:	60%
<b>2.3</b>	<p>առնվազն մեկ տարվա ընթացքում վճարովի աշխատանքի կատարումը կամ ծառայությունների մատուցումից ստացվող եկամուտը, որը հիմնավորվում է համապատասխան պայմանագրով</p> <p><b>Քանկի ռեսուրսով վարկավորման դեպքում՝</b></p> <p><b>Ազգային հիփոթեքային ընկերության ծրագրի շրջանակներում վարկավորման դեպքում՝</b></p>	մինչև 100%
<b>2.3</b>	<b>Ազգային հիփոթեքային ընկերության ծրագրի շրջանակներում վարկավորման դեպքում՝</b>	50%

<sup>1</sup> Եթե վարձակալության պայմանագրով սահմանված վճարը տարբերվում է փաստացի վճարվող գումարից, ապա ընդունվում անկախ գնահատող ընկերության կողմից գնահատված վարձակալության վճարը:

2.4	վարկի դիմումի ընդունման օրվան նախորդող մեկ տարվա ընթացքում ստացված փոխանցումները, եթե դրանք ստացվել են նվազագույնը 6 անգամ (այս դեպքում պարբերական են համարվում այն փոխանցումները, որոնք կատարվել են վերջին 12 ամիսների ընթացքում ամսենամսյա կամ երկամսյա հաճախականությամբ)	50%
2.5	կենսաթոշակը՝ երկարամյա ծառայության (<< ԿԱ ոստիկանության, << պաշտպանության նախարարության, քրեակատարողական հիմնարկների և այլ համապատասխան մարմինների աշխատակիցների, մանկավարժների, դատավորների և այլն), կերակրողին կորցնելու և այլն (բացառությամբ տարիքային կենսաթոշակի)	60%
2.6	1) <b>Ազգային հիփոթեքային ընկերության ծրագրի շրջանակներում վարկավորման դեպքում՝</b> ձեռնարկատիրական գործունեությունից ստացվող շահույթը/եկամուտը, որը հիմնավորված է ներքին հաշվառման փաստաթղթերով (այն դեպքում, եթե եկամուտը ստացվում է հարկային դաշտում ընդհանրապես չգրանցված բիզնեսից, ապա այն կարող է հաշվի առնվել 200,000 << դրամը ամսական կտրվածքով չգերազանցելու դեպքում)	60%
	2) <b>Բանկի ռեսուրսով վարկավորման դեպքում՝</b> վերջին հաշվետու տարվա ընթացքում վարկառուի ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտներ, որոնք հիմնավորված չեն << օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերով, սակայն հիմնավորված են ներքին հաշվառման փաստաթղթերով՝ եթե ձեռնարկատիրական գործունեության վերլուծությունը իրականացվել է Բանկի համապատասխան ստորաբաժանման կողմից և եթե վարկ/գրավ հարաբերակցությունը չի գերազանցում 70%-ը	100%
	Եթե վարկ/գրավ հարաբերակցությունը գերազանցում է 70%-ը	90%
2.7	պարզևավճարները՝ եթե դրանք կրում են պարբերական բնույթ (առնվազն եռամսյակային), վճարվել են վերջին մեկ տարվա ընթացքում և պայմանավորված չեն գործատուի գործունեության արդյունքներով	100%
2.8	պարզևավճարները՝ եթե դրանք կրում են պարբերական բնույթ, վճարվել են վերջին մեկ տարվա ընթացքում և պայմանավորված չեն գործատուի գործունեության արդյունքներով	60%
2.9	Այլ եկամուտներ, ընդունելի Բանկի Գլխավոր Վարկային կոմիտեի կողմից	մինչև 100%